

ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

ՎԻՐԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Մանկավարժ-քաղաքագիտ

Կասկածից դուրս է, որ լեզվի զարգացումը տեղի է ունենում հասարակական, քաղաքական և տնտեսական կյանքի անընդհատ փոփոխվող պայմանների ազդեցության ներքո: Մակայն լեզուն ունի հարստացման երկու հիմնական աղբյուրներ, ներքին՝ սեփական բառապաշարի հիմքի վրա տեղի է ունենում նոր տերմինների ստեղծման ընթացքը և միաժամանակ արդեն գոյություն ունեցող բառերի մշակումն ու կատարելագործումը, արտաքին՝ անհրաժեշտության դեպքում օտար, անթարգմանելի տերմինների ներմուծումը, որոնք բավարարում են լեզվի համակարգության պահանջները և ժամանակի ընթացքում այնպես հղկվում ու հարմարվում տվյալ լեզվի քերականական կանոններին, որ միայն մասնագետ լեզվաբանը կարող է կռահել դրանց օտարածին լինելը: Մինչդեռ, երբ այդ տերմինները լինում են պատահական, բավարար չափով չհիմնավորված, կամ խախտում են լեզվի համակարգության պահանջները, ապա դրանք ժամանակի ընթացքում դուրս են նետվում որպես անմարսելի, անհարիր տարրեր. օրինակ՝ վերջին մի քանի տասնամյակների ընթացքում մեր լեզվի մեջ մուտք գործած մարկան դարձավ մակնիշ, վիտրինան՝ ցուցափեղկ, կոմպլեքսը՝ համալիր, կորպուսը՝ մասնաշենք, ցեխը՝ արտադրամաս, շտանգան՝ ծանրաձող, շտանգիստը՝ ծանրորդ, ունիվերսալը՝ հանրախանութ, և այլն:

Գոյություն ունեցող գրեթե բոլոր բառարաններում օտար տերմինների թարգմանության մեջ, ոչ միայն միօրինակություն չկա, այլև տարբեր բառարաններ միեկնույն օտար տերմինը հայերեն տարբեր բառերով են թարգմանում՝ մեղանշելով երբեմն նաև իմաստային ճշտության դեմ, օրինակ *телескоп*-ը Ռուս-հայերեն քառահատոր և Ա. Ղարիբյանի բառարաններում թարգմանվել է աստղադիտակ, հեռադիտակ, իսկ ակադեմիայի հրատարակած պոլիտեխնիկական բառարանում՝ միայն հեռադիտակ, ուր միաժամանակ պահանջվել է թարգմանության միօրինակության սկզբունքը: *матангеи* արքյուս-ը քառահատոր բառարանում թարգմանվել է չափակալիկ, իսկ պոլիտեխնիկական բառարանում՝ ձողակալիկ:

Որպեսզի պատկերը պարզ լինի, բերենք միեկնույն օտար տերմինի թարգմանությունը՝ մի շարք բառարաններում:

<i>Анализ</i> բառը մաթեմատիկական բառարանում թարգմանված է՝	
<i>анализ</i>	վերլուծում
<i>анализированный</i>	վերլուծված
<i>анализ бесконечно малых</i>	անվերջ փոքրերի անալիզ
Պոլիտեխնիկական բառարանում՝	
<i>анализ</i>	վերլուծություն, անալիզ
<i>анализ бесконечно малых</i>	անսահման փոքրերի վերլուծություն
<i>анализ весовой</i>	կշռային անալիզ

<i>анализ газовой</i>	գազային անալիզ
<i>анализ качественный</i>	որակական անալիզ
<i>анализ логический</i>	տրամաբանական վերլուծություն
<i>анализ математический</i>	մաթեմատիկական վերլուծություն
<i>анализ объемный</i>	ծավալային անալիզ
<i>анализ элементарный</i>	տարրական վերլուծություն
<i>анализ гармонический</i>	հարմոնիկ վերլուծություն
<i>анализ электрометрический</i>	էլեկտրաչափական անալիզ
<i>анализ спектральный</i>	սպեկտրալ վերլուծություն

Ռուս-հայերեն քառահատոր բառարանում՝

<i>анализ</i>	վերլուծություն, վերլուծում, անալիզ
<i>Подвергнуто анализу</i>	վերլուծման ենթարկել
<i>анализировать</i>	վերլուծել, տաբրալուծել, անալիզ կատարել
<i>анализ литературных произведений</i>	գրական երկերի վերլուծություն
<i>анализ крови</i>	արյան անալիզ
<i>анализ химический</i>	քիմիական անալիզ
<i>анализ математический</i>	մաթեմատիկական անալիզ
<i>анализ грамматический</i>	քերականական վերլուծություն

Ա. Ղարիբջանի բառարանում՝

<i>анализ</i>	տարրալուծում, տարալուծմամբ, հե- տազոտում, անալիզ
<i>анализ химический</i>	քիմիական անալիզ
<i>анализ крови</i>	արյան անալիզ
<i>анализ почвы</i>	հողի անալիզ
<i>подвергнуть анализу</i>	վերլուծման ենթարկել
<i>анализ грамматический</i>	քերականական վերլուծություն
<i>анализирование</i>	վերլուծում, վերլուծել, տաբրալուծում, տաբրալուծել, անալիզի ենթարկել:

Նախ, եթե մաթեմատիկական բառարանում *АНАЛИЗ*-ը թարգմանված է վերլուծում, *анализированный*... վերլուծված—, ապա ինչո՞վ կարելի է բացատրել այն փաստը, որ *АНАЛИЗ* бесконечно малых արտահայտությունը նույն բառարանում թարգմանված է՝ անվերջ փոքրերի անալիզ:

Այստեղից պարզ երևում է, որ մեր լեզվի մեջ *АНАЛИЗ*-ը փոխարինել է վերլուծում, վերլուծություն և տաբրալուծում բառերին, անկախ այն հանգամանքից, որ վերջինները առանց մնացորդի արտահայտում են *АНАЛИЗ*-ի իմաստային ճշտությունը:

Այնուհետև, պոլիտեխնիկական բառարանը ուղղելով մաթեմատիկական բառարանի թույլ տված սխալը՝ *АНАЛИЗ* бесконечно малых արտահայտությունը թարգմանում է՝ «անսահման փոքրերի վերլուծություն»: Սակայն պոլիտեխնիկական, Ռուս-հայերեն քառահատոր և Ա. Ղարիբջանի բառարանների մեջ, ինչպես երևաց մեջբերված օրինակներից, *АНАЛИЗ* բառը մերթ անհետանում է՝ իր տեղը զիջելով վերլուծում, վերլուծություն կամ տաբրալուծում

բաւերին, մերթ ինչ-ինչ պատճառով, հրամայաբար հանդես է դալիս որպես անփոխարինելի տերմին:

Ինչո՞ւ և ինչպի՞ս է օրենքի հիման վրա մի դեպքում математический, элементарный, логический, гармонический, спектральный, литературный, грамматический анализ-ները դառնում են վերլուծություններ, իսկ մյուս դեպքում՝ объёмный, весовой, газовой, качественный, количественный, химический, электрометрический, математический анализ-ները ֆունդ են որպես անփոխարինելի անալիզներ:

Տարօրինակ է, որ պոլիտեխնիկական բառարանում математический анализ-ը թարգմանված է մաթեմատիկական վերլուծություն, իսկ ընդհանուր քառահատոր բառարանում՝ մաթեմատիկական անալիզ: Ինչի՞ն վերագրել կամ ինչո՞ւ՝ քացատրել այդ բառախաղը: Պարզ չէ, թե այդ բառարանները կազմողները ի՞նչ շափանիչ են ընդունել *анализ* տերմինի կերպադրամափոխության համար՝ մերք դուրս վոնդելով մեր լեզվի տիրույթի սահմաններից, մերք ազատ զոգծածության համար մուտքի ոսկեգիր տալով:

Նույնը կարելի է ասել նաև *аналитик* տերմինի մասին.

Аналитик բառը մաթեմատիկական բառարանում թարգմանված է՝

<i>аналитический</i>	անալիտիկ, վերլուծական
<i>аналитическая</i> геометрия	անալիտիկ երկրաչափություն
<i>аналитическая</i> функция	անալիտիկ ֆունկցիա

Պոլիտեխնիկական բառարանում՝

<i>аналитический</i>	վերլուծական, անալիտիկ
<i>аналитик</i>	անալիտիկ,
<i>аналитическая</i> геометрия	վերլուծական երկրաչափություն
<i>аналитическая</i> функция	վերլուծական ֆունկցիա
<i>аналитическая</i> химия	անալիտիկ քիմիա
<i>аналитические</i> весы	անալիտիկ կշեռք
<i>аналитическое</i> продолжение	վերլուծական շարունակություն
<i>аналитично</i>	վերլուծորեն, անալիտիկորեն

Ուսա-հայերեն քառահատոր բառարանում՝

<i>аналитик</i>	վերլուծող, անալիտիկ
<i>аналитический</i>	վերլուծականորեն, անալիտիկ կերպով
<i>аналитический</i> метод	վերլուծական մեթոդ
<i>аналитическая</i> химия	անալիտիկ քիմիա
<i>аналитическая</i> геометрия	վերլուծական երկրաչափություն

Ա. Ղարիբյանի բառարանում՝

<i>аналитик</i>	անալիտիկ
<i>аналитика</i>	վերլուծություն, անալիտիկա
<i>аналитический</i>	վերլուծական, անալիտիկ
<i>аналитический</i> метод	վերլուծական մեթոդ
<i>аналитический</i> ум	անալիտիկ միտք, վերլուծող միտք

аналитические весы	անալիտիկ կշեռք
аналитическая химия	վերլուծական քիմիա
аналитическая геометрия	վերլուծական երկրաչափություն

Կրկնությունից խուսափելու համար համառոտակի ասենք, որ *аналитик* տերմինի թարգմանության խառնաշփոթ վիճակը նույնն է, ինչ որ էր *анализ-ինը*: Օրինակ մաթեմատիկական բառարանում *аналитическая геометрия-ն* թարգմանված է՝ անալիտիկ երկրաչափություն, *аналитическая функция-ն*՝ անալիտիկ ֆունկցիա, իսկ պոլիտեխնիկական բառարանում՝ *аналитическая функция-ն*՝ վերլուծական ֆունկցիա, իսկ *аналитическая геометрия-ն*՝ վերլուծական երկրաչափություն: Պոլիտեխնիկական բառարանում *аналитическая химия-ն* թարգմանված է՝ անալիտիկ քիմիա, իսկ Ա. Ղափրբյանի բառարանում՝ վերլուծական քիմիա:

Այնուհետև՝

Մաթեմատիկական բառարանում թարգմանված է՝

теорема	թեորեմ
парабола	պարաբոլ
гипербола	հիպերբոլա
теория	տեսություն
теоретический	տեսական

Պոլիտեխնիկական բառարանում՝

теорема о трех моментах	երեք մոմենտների թեորեմ
теорема	թեորեմ
парабола	պարաբոլ
теория вероятностей	հավանականությունների թեորիա
теория	թեորիա, տեսություն
теоретический	տեսական, թեորետական
теоретическая механика	տեսական մեխանիկա
теория механизмов и машин	մեխանիզմների և մեքենաների թեորիա
теория ошибок	սխալների թեորիա
теория прочности	ամրության թեորիա
теория самообращения	ինքնաշրջման թեորիա
теория сооружения	կառուցվածքների թեորիա
теория сыпучих тел	սորուն մարմինների թեորիա
теория упругости	առաձգականության թեորիա

Ռուս-հայերեն բառահատոր բառարանում՝

теорема	թեորեմ
парабола	պարաբոլա
гипербола	հիպերբոլա
теория	թեորիա, տեսություն
теоретичность	տեսականություն, վերացականություն
теоретичный	տեսական, վերացական

теоретик
теоретический

թեորետիկ, տեսաբան
թեորետիկ, տեսականորեն, տեսա-
բանորեն

атомная теория
теоретически верно

ատոմային թեորիա
տեսականորեն ճիշտ է

Ա. Ղարիբյանի բառարանում՝

теорема
гипербола
парабола
теоретически

թեորեմա
հիպերբոլա
գոլգոզդ, կոնագիծ, պարաբոլա
տեսականորեն, տեսաբանորեն, թեո-
րիական

теоретичность
теоретичный

տեսականություն, վերացականություն
տեսական, վերացական

Այստեղ *теорема*, *гипербола*, *парабола* տերմինները անգլերենից ռուսերենի մեջ մուտք գործած *theorem*, *parabola*, *hyperbola* տերմիններն են, որոնք գերմաներենում համապատասխանաբար կոչվում են՝ *Lehrsatz*, *parabel*, *hyperbel*, իսկ ֆրանսերենում՝ *theoreme*, *parabole*, *hyperbole*: ինչպես տեսնում ենք, ֆրանսերենում և գերմաներենում այդ տերմինների վերջավորությունները փոփոխված են և հարմարեցված իրենց հնչյունական կանոններին: Ավելին՝ անգլերեն *theorem*-ը գերմաներենում թարգմանաբար փոխարինվել է սեփական *Lehrsatz*-ով:

Ուրեմն, եթե մենք որպես անթարգմանելի տերմիններ առաջինը ընդու-
նել ենք որպես թեորեմ, երկրորդը՝ պարաբոլ, ապա երրորդը նմանողության
կարգով պետք է ընդունենք որպես հիպերբոլ և ոչ թե հիպերբոլա, քանի որ
թեորեմ, հիպերբոլ և պարաբոլ տերմինները քերականական հոլովումների ու
խոնարհումների ժամանակ ավելի բարեհնչուն են, սեղմ ու կոկիկ, քան թեո-
րեմա, հիպերբոլա և պարաբոլա տերմինները:

Այս տեսակետից անհասկանալի է, թե ինչո՞ւ քառահատոր բառարանը
կազմողները, ինչպես նաև վաստակաշատ Ա. Ղարիբյանը իրենց բառարան-
ներում գերադասել են այդ տերմինների ռուսերեն տարբերակները պահպանել
նույնությամբ:

Այնուհետև *теория* տերմինը, որ մաթեմատիկական բառարանում միայն
մի թարգմանություն ունի՝ տեսություն, իսկ մնացած բառարաններում հիմ-
նականում պահպանվում է նույնությամբ՝ որպես անթարգմանելի տերմին,
բայց տեղ-տեղ կցման կարգով ավելացվում է մեր սեփական տեսությունը բա-
ռը: Այսպիսով, թեորիա-տեսություն բառերի մրցակցության ընթացքում բա-
ռարաններ կազմողների ջանքերով, ինչպես տեսնում ենք մեջ բերված աղյու-
սակից, թեորիան գրեթե դուրս է մղել տեսությունը: Եվ դա եզակի դեպք չէ:

Իսկ եթե մենք մի շարք տերմինների թարգմանությունները բաղդատելու
լինենք այլ տեսանկյունով, ապա կստանանք հետևյալ պատկերը (տե՛ս աղ.):

Ինչպես երևում է աղյուսակից, տերմինների թարգմանությունը նորից
խառնաշփոթ վիճակում է: Նախ՝ թարգմանչական միասնական մոտեցման
սկզբունքը խախտված է, քանի որ յուրաքանչյուր օտար տերմին պետք է

	Պոլիտեխ. բառարանում	Ռուս. հայեր. քառահ. բառարան	Ա. Ղարիբյանի բառարանում
электроскоп	էլեկտրացույց	էլեկտրացույց էլեկտրոսկոպ	էլեկտրացույց
телескоп	հեռադիտակ	աստղադիտակ, հեռադիտակ	աստղադիտակ, հեռադիտակ
спектрограф	սպեկտրագիր	լուսապատկերագիր, լուսագիր, սպեկտրագիր	լուսապատկերագիր, սպեկտրագիր
спектроскоп	սպեկտրացույց	լուսապատկերագրիտակ, լուսադիտակ, սպեկտրոսկոպ	լուսապատկերագրիտակ, սպեկտրացույց, սպեկտրոսկոպ
калориметр	Փալորաչափ, կալորիմետր	կալորաչափ	կալորաչափ
электрометр	էլեկտրաչափ	էլեկտրաչափ, էլեկտրոմետր	էլեկտրաչափ
микрометр	մանրաչափ, միկրոմետր	միկրոմետր, մանրաչափ	մանրաչափ, միկրոմետր
конденсатор	խաարառ, կոնդենսատոր	կոնդենսատոր, էլեկտրակուտակիչ	կոնդենսատոր, էլեկտրակուտակիչ
штангенциркуль	ձողակարկին	չափակարկին	ձողակարկին
аккумулятор	կուտակիչ, ակումուլյատոր	կուտակիչ, ակումուլյատոր, ուժահավաք	ուժակուտակիչ, ուժահավաքիչ, ակումուլյատոր

թարգմանվի հայերենի միարժեք այնպիսի տերմինով, որը իմաստային ավելի մեծ նշգրտություն ունի: Երկրորդ՝ եթե մենք օտար տերմինի իմաստը նշտաբանաբանությամբ բառ ունենք, ապա էլ ի՞նչ կարիք կա դրա կողքին նորից գրել օտար տերմինը: Վերահիշյալ տերմինները կարելի է որոշակիորեն թարգմանել հետևյալ կերպ. элктроскоп—էլեկտրացույց, քանի որ այն ցույց է տալիս էլեկտրականության առկայությունը. телескоп—հեռադիտակ, քանի որ այն հնարավորություն է տալիս հեռու դիտել. спектроскоп—սպեկտրացույց, քանի որ այն սպեկտրի առկայությունն է ցույց տալիս. спектрограф—սպեկտրագիր, քանի որ այն սպեկտրներ է գրառում. калориметр—կալորիաչափ, քանի որ նրա միջոցով ջերմության քանակն է չափվում կալորիաներով. электрометр—էլեկտրաչափ. эмпиреметр—ամպերաչափ. микрометр—մանրաչափ. термометр—ջերմաչափ. конденсатор—խտաբար. аккумулятор—կուտակիչ. штангенциркуль—ձողակարկին և այլն:

Այսպիսով, եթե մենք թարգմանապաշտեցանք, տերմինաբանական այս կնճռոտ հարցերում պարզորոշություն չմտցնենք, ապա հանրակրթական, միջնակարգ մասնագիտական տեխնիկոմենների և նույնիսկ բուհերի համար հեղինակային կամ թարգմանված դասագրքերի լեզվի վիճակը տեխնիկական, տերմինաբանական առումով կլինի անմխիթար: Եվ մի՞թե այդ չէ պատճառը, որ վերջերս մասնագիտական տեխնիկոմենների համար «Լույս» հրատարակչության լույս ընծայած Սախարովի և Բլուդովի ֆիզիկայի դասընթացի հայերեն թարգմանության մեջ մանրսլափի փոխարեն կիրառվել է միկրոմետր (էջ 24), ձևավորությունը փոխարեն՝ դեֆորմացիա (էջ 102, 129), կուտակիչի փոխարեն՝ ակուումուլատոր, էլեկտրացույցի փոխարեն՝ էլեկտրոսկոպ, խտաբարի փոխարեն՝ կոնդենսատոր (էջ 345, 346, 347, 357) և այլն: Նման բազմաթիվ օրինակներ կարելի է բերել նաև Ֆալեևի և Պյոտիշկինի հանրակրթական միջնակարգ գրպորոցների համար կազմված ֆիզիկայի դասագրքի հայերեն թարգմանությունից:

Այդ տեսակետից, տերմինաբանական-տերմինաշինական հարցերի ճիշտ լուծումը առավելապես անհրաժեշտ է նաև բուհերի (մասնավորապես տեխնիկական) և միջնակարգ մասնագիտական հաստատությունների ուսանողության համար:

Այն սկզբունքները, որոնք ընկած են տերմինաբանական կոմիտեի 1955 թ. որոշման հիմքում, մինչև այսօր, ցավոք, գործնականում չեն կիրառվում:

Կասկածից դուրս է, որ բերված օրինակների թիվը կարելի է բազմապատկել, սակայն այդքան էլ բավական է զաղափաք կազմելու համար, թե ի՞նչ աստիճանի խճողված է մեր տեխնիկական լեզուն ոչ միայն ֆիզիկայի, այլև մաթեմատիկայի և տեխնիկական մյուս գիտությունների բնագավառում:

Օտար տերմինների օգնությամբ կարելի է դիմել միայն և միայն այն դեպքում, երբ մեր բառարաններում բացակայում են այդ տերմինների իմաստային նշանությունը պահպանող համապատասխան բառեր և կամ մեր բառատեղծ շինարար միտքը այսօր դեռևս ի վիճակի չէ սեփական բառաբեղմնի հիման վրա համապատասխան տերմիններ ստեղծել:

Այդ առումով տեսնենք թե ինչ միտք է արտահայտում շվեդարացի հայագետ, Ժնեի համալսարանի պրոֆեսոր Ռորեր Գոգելը, Լոս-Անժելոսում կարդացած իր մի դասախոսության մեջ՝ նվիրված հայ լեզվի հարստացման և զարգացման ուղիներին. «Բայց բառերուն առատությունն ավելի, հայ լեզվի մը ճոխացումը առաջ կուգա անոր ճոխանալու, նորոգվելու ընդունակություն»:

նեն։ Հայ լեզուն ճոխացած է ինչպես փոխառություններով, նույնպես ալ ճոխացած է և տակավին կճոխանա ածանցյալ և բարդ բառերով, որոնց կազմությունը կանոնավոր է։ Ասիկա կնշանակե, թե նոր բառերը արդեն գոյություն ունեցող ածանցներու կամ բաղդատական օրինակին համեմատ կստեղծվին։ Այսպիսով հայտնի կըլլա, թե ինչ մեծ շափով լեզվի մը ներկա զարգացումը կապված է անոր անցյալին, այսինքն, դրական. ավանդության հետ»¹։

Ուրեմն լեզվի ճոխացումը առաջ է գալիս հիմնականում սեփական բառապաշարի հիմքի վրա, բառաստեղծման, ածանցման կամ համադրման եղանակով, իսկ երբեմն էլ անհրաժեշտության դեպքում՝ նաև փոխառման միջոցով։

Մեր լեզվի զարգացման ընթացքում տերմինաբանության և տերմինաշինության գիտական սկզբունքները հետևողաբար և վճռականորեն պետք է կիրառել հասարակական, քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքի բոլոր բնագավառներում։

Ի վերջո պատահական չէ, որ «Ռուսաց լեզուն մաքրելու մասին» հոդվածում² Վ. Ի. Լենինը զայրույթով նկատում է, որ օտար բառերի անհարկի գործածությունը լեզուն դարձնում է անհասկանալի և կարող է հասցնել մասսաների վրա ունեցած մեր գաղափարական ազդեցության թուլացմանը։

¹ «Զարթոնք», 6. X. 1968։

² Տե՛ս Վ. Ի. Լենին, Ծրկեր, հ. 30, էջ 375։